# ՋԱՒԱԽՔ.

## *ՆԻՒԹԵՐ ԱՊԱԳԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ*

*Ե. ԼԱԼԱՅԵԱՆ*

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

---

### ՋԱՒԱԽՔ ԵՒ ԱԽԱԼՔԱԼԱՔ.

Ջաւախքը Քութայիսի նահանգի ինը գաւառներից մին է։ Վրաց Վախթանգ Զ Թագաւոր մատենագիրն իւր «Վրացւոց բաղք» (Քարթլիս ցխովրեբա) պատմութեան մէջ ասում է, թէ այս երկիրն, այսինքն վերին Կուրի դաշտավայրը, Երուշէտը և Փոցխով ու Ցօր-ծղալի գետերի միջավայրը, ժառանգութիւն է ընկել վրաց նախահայր Քարթլոսի որդի Մցխեթոսի Ջաւախոս որդուն, որի անուամբ և Ջաւախք է կոչուել։

Շոպէն առասպելական համարելով Ջաւախոսին, Ջաւախքի անունը հանում է ջաւ, գարի, վրացերէն խօսքից. որովհետև երկրի բարձրութեան պատճառով ամենից լաւ գարի է բուսնում այդտեղ։

Մինչև Արշակունեաց հարստութեան սկիզբն ինչպէս մեր, այնպէս և վրաց պատմագիրներն այս գաւառի մասին համարեա ոչինչ չեն յիշում։ Սրանց ժամանակ Մովսէս Խորենացու [1]) ասելով Վաղարշակ Ա. այս գաւառի կէսը տալիս է Շարայի ցեղից Գուշարին ժառանգութիւն, իսկ նահանգի վերայ կարգում է մի բդեշխ, որ Հայոց հիւսիսային կողմերը պահպանէ աւազակ ազգերից։ «Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ (կարգէ), ասում է Խորենացին [2]), կողմնակալ հիւսիսոյ զմեծ և զհզօր ազգն և նահապետութեան անուն կարգայ բդեշխ Գուգարացւոց»։ Այս բդեշխը միանգամայն իշխում էր վրաց երկրի կամ ժողովրդեան մի մասին եա, ուստի և մեջանի մատենագիրներ անուանում են նրան «բդեշխ վրաց». այսպէս՝ Աշուշային Խորենացին [3]) կո-

---

[1]) Բ. գիրք գլ. Ը. նաև Առաջեկ. հանդէս Գ. եր. 39. [2]) Անդ. [3]) Գիրք Գ. գլ. Դ.

չում է բդեշխ Գուգարացւոց, իսկ Վարդան՝ բդեշխ վրաց, թէպէտ այդ ժամանակ Վրաստանում թագաւոր էր Արշէզ կամ Արշիզը, ինչպէս և նրանից յետոյ Վազգէնը։ Իսկ Միհրանին Խորենացին (Բ. գլ. Կ) կոչում է առաջնորդ վրաց և բդեշխ Գուգարացւոց. բայց սա վրաց թագաւոր էլ էր։ Գուգարքի առաջին բդեշխն էլ, որ Վաղարշակ Ա. կարգել էր, Աքէքսանդր Մակեդոնացու վրացի գերիների վերայ կարգած իշխանի, Միհրդատի թոռն էր։ Հայոց Արտաշէս Ա. թագաւորն ընդարձակում է այս բդեշխի իշխանութիւնը և կողմնակալ է կարգում Պոնտոս ծովի վերայ, ինչպէս ասում է Խորենացին. [1]) «Բայց (Արտաշէս) զդուստրը իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բդեշխի մեծի... և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովու»։

Արշակ Բ. ժամանակ այս նահանգն էլ ապստամբելով անցնում է Վրաց կողմը, սակայն Պապ թագաւորի Մուշեղ սպարապետը նորից նուաճում է, ինչպէս պատմում է Բիւզանդը [2])։ «Ապա խաղայր սպարապետն Մուշեղ 'ի վերայ Վրաց արքային և նեղէր զնա մեծապէս, և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն... և զբդեշխն Գուգարաց՝ որ յառաջն ծառայ էր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր և թափէր զամենայն գաւառն և առնոյր պանդանդս, և զմնացեալսն 'ի հարկի կացուցանէր. և զհին սահմանն՝ որ յառաջ ունէր լեալ ընդ երկրին Հայոց և ընդ երկրի Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր՝ այնուհետև յինքն վարեալ զառնայր անտի»։ Բայց Ե. դարում արդէն Գուգարքի բոլոր գաւառները դարձեալ անցած էին վրաց ձեռքը, ուստի և Մովսէս Խորենացին իւր աշխարհագրութեան մէջ բոլոր գաւառները, բացի Կողբոփորից, Վրաստանի գաւառների կարգն էլ է դասում։

Բագրատունեաց ժամանակ Սմբատ Ա. նորից վերադարձնում է այս նահանգը Հայաստանին, ինչպէս պատմում է Յովհաննէս կաթողիկոսը [3]). « Եւ անտի դարձեալ իբրև զօդապարիկ իմն երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց և զայնս ևս ամբողջ իւրոյ տէրութեան՝ առհասարակ յինքն գրաւէր նուաճէր»։

Ժ. դարում Գուգարքի մի մասն ընկնում է Հայոց Կիւրիկեան թագաւորութեան ձեռքը, իսկ Ջաւախքն անցնում Վրաց իշխանութեան ներքոյ։ Վրաց Բագրատ Գ. թագաւորը (980—1014) հիմնում է Ախալքալաքը, առանց բերդի, իսկ սրա թոռ Բագրատ IV (1027—1072) 1045 թուին իւր վասալ Լիպարիտ Օրբելեանի հետ ունեցած պատերազմի ժամանակ շինում է բերդը։ Ախալքալաք վրացերէն նշանակում է նոր քաղաք։ Սրա թագաւորութեան ժամանակ, այսին-

[1]) Գիրք Բ. գլ. Ժ. [2]). Ե. 15 եր. 178. [3]). Երևս. 133. Ինճինճ. Ստ. եր.3 52.

քրն 1064 թուին, ինչպէս պատմում է Մատթէոս Ուռհայեցին (ՃԺԶ). «Յարուցեալ սուլտանն (Ալփասլան) ահագին բազմութեամբ խլրով, մատ. յաշխարհն վրաց... և իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւախս և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ախալ. և առ հասարակ զամենայն քաղաք սրով կոտորեաց զայր և կին՝ անողորմ. և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան 'ի Պարսիկս 'ի գերութիւն և զանձս ոսկւոյ և արծաթոյ ականց մարգարտացն որ ոչ գոյ թիւ։

ԺԳ. դարում, թաթարների արշաւանքների ժամանակ, երբ Վրաց պետութիւնը սաստիկ թուլանում է, Ախալքալաքի և Ախալցխայի հողատէրերը սկսում են անկախութեան ձգտել և ինքնագլուխ կառավարել այս գաւառները։ Եւ որովհետև Ախալցխայի դիրքը սաստիկ նըպաստում էր անկախութիւն ձեռք բերելու, ուստի ԺԴ. դարու առաջին կեսում Վրաց թագաւորներն ստիպւում են անկախ համարել այդ երկիրն և այդտեղի հողատէրերից Սարգսին ճանաչել Ախալցխայի և Ախալքալաքի միացեալ գաւառների աթաբէկ (Հայրիշխան)։ Հարիւր տարի չանցած այդ աթաբէկներից մին՝ Աղբուղան՝ հրատարակում է սրդէն իւր օրէնքները. (Աղբուղայի օրէնքներ)։

1484 թուին Պարսից Եակուբ շահը յարձակւում է այս Սահաթաբակոյի (Աթաբէկի երկիր) վրայ, թալանում է Ջաւախքը և պաշարում Ախալքալաքը։ Մեսխիները չեն կարողանում երկար պաշտպանել, քաղաքը առնւում է և Եակուբը բոլոր նշանաւոր Մեսխիներին և քաղաքի բնակիչներին գերի է տանում։ Ցետոյ վառում է Ախալքալաքը և գնում պաշարում Ախալցխան։

1637 թուին Սահաթաբակոն ընկճուելով Վրաց և Իմերէթու թագաւորներից և Թուրքերից կորցնում է իւր անկախութիւնն և առնում Տաճկաստանի մի փաշայութիւն։ Այնուհետև Ախալքալաքը կառավարւում է Թուրք բէկերով։

1772 թուին Կախեթու Հերակլէս և Իմերէթի Սողոմոն թագաւորներն պաշարում են Ախալքալաքը և քիչ է մնում որ առնեն։ Բայց այս ժամանակ Սողոմոն թագաւորը ժանտախտով բռնւում է և պաշարումը դադարում։

1807 թուին Ռուսները Գուդովիչ զօրավարի առաջնորդութեամբ պաշարում են Ախալքալաքը, սակայն չեն կարողանում առնել և 1200-ից աւելի ռուս զինուորներ ընկնում են բերդի պարսպի ներքև, 3 թնդանօթ մնում են Թուրքերի ձեռքը։

1810 թուի սեպտեմբերի 4-ին Ռուսները Պաուլուչչի գնդապետի առաջնորդութեամբ գիշերով յանկարծակի յարձակւում են Ախալ-

քաղաքի դաշտում բանակած Ցաձկաց և Պարսից միացեալ զօրքի վրայ, ուր գտնւում էր և Վրաց թագաժառանգ Աղէքսանդրը։ Չփոթութիւն ձըգելով զօրաց մէջ՝ ռուսները յաջողացնում են մեծ ջարդ տալ թշնամիներին։ Երևանու սարդարը, Ախլցխու փաշան և թագաժառանգ Աղէքսանդրը փախչում են և մեծ աւար թողնում ռուսներին։

1811 թուի դեկտեմբերի 7-ին ռուսները Կոտլարեվսկու առաջնորդութեամբ անպատմելի նեղութիւններ կրելով՝ ուղղակի անցնում են Թրիալէթու լեռներով և գիշերը յանկարծ յարձակուելով Ախալքալաքի վերայ՝ շփոթութիւն են ձգում և առնում բերդը։ Թուրքերը փախչում են՝ թողնելով ռուսներին 16 թնդանօթ և 2 դրօշակ։ Սակայն հաշտութիւնից յետ Ախալքալաքը դարձեալ մնում է թուրքերին։

Վերջապէս 1828 թուի Յուլիսի 23-ին ռուսները Պասկեվիչ զօրավարի առաջնորդութեամբ Ղարսն առնելուց յետ՝ յարձակւում են Ախալքալաքի վերայ և արիւնահեղ պատերազմ տալով՝ առնում բերդին, խլելով 14 թնդանօթ և 13 դրօշակ [1]։

1829 թուի սեպտեմբերի 14-ին կայացած Ադրիանուպօլսի դաշնադրութեամբ Ախալքալաքը մնում է Ռուսներին։

Դարուս սկզբի պատերազմների ժամանակ Ախալքալաք քաղաքի բնակիչները փախչում և ցրւում են զանազան կողմեր։ Պասկեվիչի պատերազմին այդ քաղաքը բոլորովին ամայանում և նրա բնակիչները պատերազմից յետոյ վերադառնալով բնակւում են Խօսպիա գիւղը։

1830 թուին Էրզրումի և մասամբ Արդահանի գաւառների հայերը գաղթում և բնակւում են Ջաւախքի գիւղերում, միայն քաղաքը մնում է աւերակ։

1831 թուին Ախալցխայից Աղաբաբ Փեշտմալճեան, Պետրոս Տէր-Մանուէլեան, գիշերապահ Յովհաննէսը և մի ոմն Ստեփաննոս գալիս են Ախալքալաք և բերդի հարաւային կողմում, Ցաձկաց գերեզմանատան մօտ շինում են բնակարաններ, մի փուռ և մի սրճատուն։ Այնուհետև հետզհետ մարդիկ գալիս բնակութիւն են հաստատում այստեղ և այսպիսով կազմում են մի փոքրիկ գիւղ, որ Ջաւախքի հետ միասին համարւում էր մի մօկռուլութիւն։

1860 թուին 30 տարուայ ընթացքում Ախալքալաքի բընակիչների թիւը հասնում է մինչև 366 տան, 1101 ար. 1088 իգ. սեռի, ընդամէնը 2189 հոգու։

1868 թուին Ախալքալաքը մօկռովութիւնից փոխւում է ուեզդ-տաւութեան և պատկանում է Ախալցխու գաւառին։

1874 թուին, երբ բնակիչների թիւը հասնում է 493 տան, 1549 ա. 1418 իգ. սեռից, ընդամէնը 2967 հոգու, Ախալքալաքը կազմում է մի առանձին գաւառ և համարւում Գ. կարգի գաւառական քաղաք։

[1]) Потто, Кавказская война հատոր Գ. եր. 110։

1889 թուին Ախալքալաքի գաւառը բաժանւում է Բարալէթու և Գարեկայի ոստիկանութիւնների և իւրաքանչիւրը կառավարւում է մի ոստիկանով, որոնք ենթարկւում են գաւառապետին։

1890 թուին Ախալքալաքը վերածւում է գաւառական Բ. կարգի քաղաքի։ Իսկ ներկայ 1896 թուին ստանում է քաղաքային պարզ ինքնավարութիւն։

## ԽԸՐԹԸԶ.

Խըրթըզը գտնւում է Ախալքալաքից դէպի հիւսիս, 21 վերստ հեռաւորութեամբ, Կուրի ձորակում, այնտեղ՝ ուր Ախալքալաք և Կուր գետերը միանում են, և ահա այդ «միանում են» վրացերէն էրթվիս, իսկ սրանից էրթվիս բառից առացել է նա իւր անունը։ Զատ հին քաղաք և բերդ է եղած։ Բերդի հիմնարկութիւնը վերագրւում է Պարսից Կիւրոս թագաւորին (✝ 529 Ք. առաջ)։ Վրաց պատմագիրների ասելով այս բերդը սաստիկ ընդդիմացել է Աղէքսանդր Մակեդոնացուն։ Խըրթըզ բերդը յիշւում է և Պոմպէոսի արշաւանքների ժամանակ, որին նա տիրում է երկարատև և արիւնահեղ պաշարումից յետոյ։ Այստեղ Վրաց թագաւոր Վախթանգ Ղուրգասալանը սպասել է Յոյների և Պարսից պատերազմների հետևանքներին և երբ Յոյները յաղթել են, Վախթանգը թարմ ուժերով յարձակուել է նրանց վերայ և սաստիկ ջարդ տուել։

1624 թուին հռչակաւոր Մօուրաւ Գէորգ Սահակաձէ այստեղ ջարդում է Պարսիկներին և ազատում Խըրթըզը նրանց լծից։

Վախուշտի ժամանակ (ԺԸ. դարում) այստեղ կենում էին ենիչէրներ, բայց 1770 թուին Վրաց թագաւոր Հերակլը Ասլինջայի մօտ Տաճիկներից տարած մեծ յաղթութիւնից յետ տիրում է և Խըրթըզին, սակայն յետոյ Տաճիկները նորից գրաւում են։ Խըրթզի վերջին գայմագամն էր Բաշ-աղան որ ամուսնացած էր Աջարիայի փաշի մօտիկ ազգական Խմշի-օղլու աղջկայ հետ։ Բաշ աղան իւր հարեմն է մոցնում Թըլեցի Դաւիթ անուն և Բարալէթցի Խամալէձէի վրացի աղջիկները, որա կինը գրգռւում և աղերսում է Աջարիայի իւր ազգական փաշին, որ սուլթանից հրաման առնելով գալիս պաշարում է Խըրթըզը։ Այս ժամանակ Բաշ-աղան իւր հարեմում զուարճանալիս է եղել. փաշան վառօդով ցկել է տալիս ամրոցի պատը, սպանում և ապա գըլխատում է Բաշ-աղին ու գլուխը ուղարկում Պօլիս։ Նրա դին թաղւում է Կուրի ձախ ափին։ Եւ մինչև օրս էլ ծերերը ցոյց են տալիս ամրոցի այն պատը, որ վառօդով պայթել էին։

1828 թուին Յուլիսի 26-ին, Պասկևիչը Ախալքալաքը առնե-

լուց յետոյ, նրա զօրապետ Ռանվոկլին առանց պատերազմի առնում է Խրթըզը։

Այժմ բերդը բոլորովին աւերակ է, իսկ գիւղը բաղկացած է 229 տնից, 756 ար. 604 իգ. սեռից, ընդամէնը 1360 հոգի։ Սրանցից միայն 5 տունը, 13 արական, 12 իգական սեռից հայ լուսաւորչական են, մնացածները թուրք սուննիներ։

## ՏԻՒՄՈՒԿ ԿԱՄ ԹՄՈԿՎԻ.

Տիւմուկ նշանակում է քրմապետ։ Այս բերդի հիմնարկութիւնը վերագրւում է Արիաների (Բագտրիացիների և իրանցիների) Կովկասի տիրապետութեան առաջին ժամանակներին։ 1590 կամ 1570 թուականներին Քր. առաջ Բագտրիական թագաւորութեան հիմնադիր Վերա Ջիմշուար, (որի անուամբ և, ասում են, կոչուել է Թիֆլիսի Վերա թաղը) տիրեց ամբողջ Ասիան և 'ի միջի այլոց Կովկասը, տարածելով այստեղ երկրպագութիւն երկնային լուսատուների, և հիմնեց իւր քրմերի համար գլխաւոր կեցարաններ Թմոկվում, Մցխէթում և ուրիշ տեղեր։ Յետոյ արդէն Թմոկվին յիշւում է Քարթլիս-Ցխովրեբայում առաջին անգամ 920 թուին Քր. յետոյ, երբ Ադրբեջանի էմիր Աբդուլ Կասինն ամբողջ աշխարհի և Պարսկաստանի տիրապետողի հրամանով անհամար մահմեդական զօրքով խուժում է Վրաստան և Սամցխէի (Ախալցխու գաւառ) ճանապարհին պաշարում Թմոկվի բերդը։ Բայց հաւասատխանալով նրա անմատչելի և անառիկ դրութեան, թողնում է այն և պաշարում Կվելի բերդը (Ախալցխայի գաւառում, Ջակիս-ծղալի գետի ձախ ափին)։

Այստեղ Բագրատ Մեծ (1027—1072) Վրաց թագաւորը բանդարկում է Բագրատ Արտանուչցու որդիներին՝ Սմբատին և Գուրգէնին, ուր և նրանք մեռնում են։ Այստեղ այս Բագրատ Մեծը հիմնում է մի ընդարձակ և վայելչակերտ տաճար, ինչպէս ասում է Քարթլիս-Ցխովրեբայում։ Սրա որդու Գէօրգի Բ. թագաւորութեան ժամանակ (1072—1089) Թմոկվին կործանւում է սաստիկ երկրաշարժից, որ ամբողջ Վրաստանին մեծամեծ վնասներ է պատճառում և տեւում է մի ամբողջ տարի։ Թմոկվիի մէջ երկրաշարժից սպանւեց և Էրիստաւ Կոխորէշլին։

Վրաց Դիմիտրի I-ի թագաւորութեան ժամանակ (1125—1155) սրա քոյր Թամարան հիմնում է այստեղ սուրբ Խաչի վանքը։

Այստեղից է Սարգիս Թմոկվեցին, որ մի ուսեալ, փիլիսոփայ և հռետոր մարդ էր և Վրաց իշխանների հետ ջանք էր թափում ազատել Վրաստանը Մոնղոլների լծից։

1553 թուին Թմուկուն տիրում է Պարսից Թամազ շահն և յանձնում Կայխոսրօ աթաբէկին։

## ԾՈՒՆԴԸ.

Ծունդան Վրաստանի ամենահին և ամուր բերդն է։ Նրա հիմնարկութիւնը վերագրւում է Քարթլոսի թոռ, Մցխէթոսի որդի Ջաւախոսին։ Երբ Արիաները տիրապետում էին Կովկասը, նրանք բնակեցնում են Ծունդայում Մարգերին, որոնց անունով և այդ հովիտը կոչւում է Մարգաստան։ Վրաց Փառնաւազի (302—237 Ք. [առաջ]) թագաւորութեան ժամանակից մինչև Վրաստանի բաժանումը (1455-1463) Ծունդան մայրաքաղաք էր Ծունդայի էրիստաւութեան (Նախարարութիւն)։ Վրաց Փարսմանի թագաւորութեան (72—87) ժամանակ Հայոց թագաւոր Երուանդը խլելով վրացիներից Ծունդան կոչւում է Քաջաց-տուն։ Բայց Փարսմանի յաջորդները՝ Ազօրկ և Արմազէլ (87—103) նորից վերադարձնում են Վրաստանին։ Վրաց Միհրդատ Գ. (364—379) վերանորոգում և գեղեցկացնում է Ծունդայի եկեղեցին։ Վրաց Վախթանգ Ղուրգասլանի թագաւորութեան ժամանակ (446—499) այստեղ էրիստաւ էր Նասար անունով մին, որին նա տանում է իւր հետ Հնդկաստան պատերազմի։ Այս թագաւորը նշանակում է այստեղ մի եպիսկոպոս։ Ծունդան Վախթանգ Ղուրգասլանի կրտսեր որդիների ամարանոցն էր, որոնք էրիստաւի իրաւունքներով կառավարում էին Արևմտեան Վրաստանը և Աբխազիան։ Վախուշտի ժամանակ (ԺԸ դարում) Ծունդան այլ ևս քաղաք չէր, միայն բերդը դեռ ևս պահպանւում էր։ Այսօր Ծունդայի բերդը ևս աւերակ է, ինչպէս և եկեղեցին։ Այստեղ բնակւում են 15 տուն թուրք սուննիներ, 52 ար. 56 իգ. սեռից, ընդամէնը 108 հոգի։

---

## ԳԻՒՄՈՒՐԴՕ.

Այս եկեղեցին կառուցել է Յովհաննէս վրացի եպիսկոպոսը (957—964) Աբխազաց Լևոն Գ. թագաւորի թագաւորութեան (955—957) և Ջվիադի էրիստաւութեան ժամանակ, ինչպէս վկայում են պատերի վրայ եղած արձանագրութիւնները։

Գիւմուրդօյում նստում էր Ջաւախքի վրաց առաջնորդը։

Վրաց Մեծն Բագրատ թագաւորը (1027—1072) շինել է նրա արևմտեան գաւիթը։

# ՎԱՐՁԻԱ ԿԱՄ ՎԱՐՁՈՒՆԻՔ

*Վարձիա վրացերէն նշանակում է վարդերի ամրոց։ Սրա հիմնարկութիւնը վրաց տարեգիրները վերագրում են վրաց Գէօրգի Գ. թագաւորին* (1156—1184), *Թամար թագուհու հօրը, որ կիսակատար է թողել։ Նրա դուստր, մեծահռչակ Թամար թագուհին* (1184—1212) *ոչ միայն մոռացութեան չտուեց իւր հօր ձեռնարկութիւնը, այլ և իւր բոլոր ուշադրութիւնը դարձնելով նրա վրայ, իւր համար մի փառաւոր ապարանք դարձրեց, որ նրա ժամանակ* 360 *սենեակ ունէր։ Նա այստեղ ժայռի մէջ փորել տուեց և Ս. Աստուածածնի Վերափոխման հրաշալի եկեղեցին, որ* 1553 *թուին պարսից Թամազ շահը կողոպտեց։*

*Այստեղ մի փոքրիկ մատուռի մէջ թաղուած է վրաց թագաւոր Կոստանդին Ա.* (1407—1414)։

*Ոմանք Ս. Աստուածածնի Վերափոխման եկեղեցու մէջ եղած գերեզմանը Թամար թագուհունն են համարում, բայց սխալւում են, Թամար թագուհին թաղուած է Գելաթի վանքում։*

*Ահա այս է վրաց տարեգիրների տուած տեղեկութիւնը, իսկ Հայոց պատմագիրներից Վարդան Բարձրբերդցին*[1]) *ասում է, թէ Է. դարու սկզբում «ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածին, որ արդ Վարձիոյ կոչի՝ յայնժամ Ճոնխացն կոչիւր։ Եւ տարաւ զնա Սարգիս Ճոնեացն ի գողութ յերեսաց այլազգեաց, ուր արար աքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետին—զկինն Դեմետրեայ արքային վրաց յուրկութենէ առողջ արարեալ ամենևին, վասն որոյ և առին ի Հայոց և է սրբոյն Մեսրովբայ աւրհնեալ և կամ Բարսղի սրբոյ ձոնին և ունի գիր հայերէն յաջ թևն։»*

*Սրանից երևում է, որ աւանդութեան ասելով սուրբ Աստուածածնի տուած դրախտի ծառի ճիւղից շինուած Ճոնեաց սուրբ խաչը պահպանութեան համար Է. դարու սկզբում Վարձիա է փոխադրած, որի պատճառով և Վարձիոյ է կոչուել։ Հետևապէս և այս Վարձիան ոչ թէ ԺԲ. դարումն է շինուել, ինչպէս վրաց տարեգիրներն ուզում են հաստատել, այլ Է. դարուց առաջ, թերևս մի հայ իշխանի ձեռքով։ Իսկ Գէորգ և Թամար թագաւորն ու թագուհին միայն նորոգել և նորանոր շինութիւններով հարստացրել են*[2])։

---

[1]) Երես ՂԲ—7.

[2]) Վարձիայի մասին աւանդութիւնները տես իմ «Ջաւախքի բուրմունք»-ում։